

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

### I. Տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ

**Աշխատանքի նկարագրությունը՝** Շինարարական աշխատանքների մատուցում՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղում հյուրատան հիմնանորոգում և վերակառուցում

**Տևողությունը՝** Հունվար - Հունիս, 2019թ., 5 ամիս

**Ծրագիրը՝** «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ՄԱՉԾ/00110193

**Վայրը՝** ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Դիտավան

### II. Նախապատմություն

«Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրն աջակցում է Հայաստանի գյուղական համայնքներին՝ ստեղծելու այլընտրանքային եկամտի աղբյուրներ գյուղաբնակների համար, զբոսաշրջության զարգացման միջոցով: Ծրագրի առաջնային խնդիրներից է կրթել և ներգրավել տեղական համայնքներին՝ քաջալերելով նրանց մշակել նոր լուծումներ զբոսաշրջիկներին գրավելու համար:

### III. Աշխատանքի շրջանակը և բովանդակությունը

ՄԱՉԾ-ի Ինտեգրված զբոսաշրջության զարգացման ծրագրի ենթակառուցվածքի վերականգնման և շինարարական նախագծման փորձագետի ընդհանուր ուղղորդմամբ և Ինտեգրված զբոսաշրջության զարգացման ծրագրի համակարգողի անմիջական ղեկավարության ներքո՝ ենթակապալառուն պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղում հյուրատան հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների իրականացման համար ըստ նախագծի:

ՀՀ Տավուշի մարզի Դիտավան գյուղում հյուրատան հիմնանորոգման և վերակառուցման նախագիծը կարող է ձեռք բերվել 14 Պ. Ադամյան հասցեով: Խնդրում ենք դիմել գնումների գծով մասնագետ՝ Սուրեն Սաղաթեյանին (հեռ.՝ 060-530000, ներքին՝ 119):

### Առաջադրանքի հիմնական գործողությունները՝

Շինարարական աշխատանքների մատուցման շրջանակներում կապալառու կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները՝

1. ՀՀ Տավուշի մարզի Դիտավան գյուղում հյուրատան հիմնանորոգում և վերակառուցում ըստ տրամադրված տեխնիկական պայմանների:
2. Շինարարությունն իրականացնել խստորեն հետևելով նախագծին, գործող շինարարական նորմերի պահանջներին և նոր նյութերի/շինվածքների օգտագործման/տեղադրման տեխնոլոգիական պահանջներին ու հրահանգներին:
3. Աջակցել Ծրագրի փորձագետներին, որակի տեխնիկական հսկողության և նախագծային կազմակերպություններին համապատասխանաբար տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացման հարցում (ապահովել փորձագետների մուտքը շինհրապարակ և այլն): Մասնավորապես այն կարող է ներառել հետևյալը.
  - Ծրագրի խորհրդատու/փորձագետի կողմից բարձրացված հարցերի ժամանակին արձագանքում, նկատված թերությունների վերացում նշված ժամկետներում:
  - Անհրաժեշտության դեպքում խելամիտ ժամկետներում տեղյակ պահել խորհրդատու/փորձագետին առաջացած խոչընդոտների մասին և ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման համար:
4. Ապահովել կատարված աշխատանքների փաստագրումը (ներառյալ լուսանկարումը և կցումը ակտերին):
5. Պահպանել շրջակա միջավայրի պահպանությանն ու շինարարական աշխատանքների անվտանգությանը վերաբերվող գործող օրենսդրության պահանջները: Կապալառուն լիովին

պատասխանատվություն է կրում երրորդ անձանց կյանքին, առողջությանը, գույքին և այլ պատճառված վնասների համար:

#### IV. Հատուկ պահանջներ

1. Խստորեն պահպանել Ծրագրի ղեկավարության հետ համաձայնեցված շինարարական աշխատանքների ժամանակացույցն ըստ շինարարության փուլերի և աշխատանքների իրականացման հերթականության:

Շինարարական աշխատանքների ժամանակացույցի չպահպանումը կապալառուի կողմից առաջացնում է տույժ՝ պայմանագրային գնի 0.1% (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոսի) չափով օրական, հաշվարկված ոչ աճողական հիմքով՝ ոչ ավել քան աշխատանքների գնի 10%-ը:

2. Շինարարության ընթացքում առաջացող/աշխատանքային կարգով ծագող նախագծային փոփոխությունները ենթակա են երկկողմանի գրավոր համաձայնեցման:

#### V. Ընդհանուր դրույթներ

1. Շինարարության որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի հսկողական ստուգումներով, բացումներով, հսկողական չափումներով, աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներով և փորձարկումներով համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. թիվ 44 հրամանով հաստատված «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման» հրահանգի:

2. Ծրագրի կողմից կնշանակվի խորհրդատու/փորձագետ աշխատանքների ծավալների և որակի հսկողությունը ըստ սահմանված ժամանակացույցի իրականացնելու համար: Ծրագրի խորհրդատու/փորձագետի կողմից կիրականացվի ծածկված աշխատանքների ստուգում և ակտերի ստորագրում:

3. Շինարարության որակը պատշաճ մակարդակով չապահովելու և/կամ խորհրդատու/փորձագետի կողմից մատնանշված նախագծային փաստաթղթերից շեղումների հետևանքով առաջացած բոլոր թերությունների վերացումը/վերակառուցումը իրականացնում է կապալառուն՝ իր միջոցների հաշվին:

#### VI. Կապալառուի որակավորում

Դիմորդ կազմակերպությունը/ընկերությունը պետք է ունենա՝

1. Կապիտալ շինարարության առնվազն 3 տարվա փորձ (որպես հիմնական կապալառու):
2. Աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները

որակավորումը	Մասնագետների աշխատանքային փորձը	
	Ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
Ճարտարագետ- շինարար	Վերջին 5 տարում 3 տարվա աշխատանքային փորձ	Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն
Ճարտարագետ-Էներգետիկ	Վերջին 5 տարում 3 տարվա աշխատանքային փորձ	Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի էլ. մոնտաժային և ջեռուցման աշխատանքներ
Ճարտարագետ-հիդրոշինարար	Վերջին 5 տարում 3 տարվա աշխատանքային փորձ	Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ներքին ջրամատակարարման և կոյուղագծերի կառուցման աշխատանքներ

Կապի և թույլ հոսանքների ճարտարագետ	Վերջին 5 տարում 3 տարվա աշխատանքային փորձ	Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ներքին հեռախոսացանցերի, անվտանգության համակարգի, տեսահսկման ցանցի, համակարգչային ցանցի, հրդեհային ազդասարքերի մոնիտաժային աշխատանքներ
------------------------------------	--	---

3. Սեփական կամ վարձակալած պահանջվող հիմնական շինարարական սարքավորումներ և մեքենաներ շինարարական աշխատանքների իրականացման ողջ ժամանակաշրջանի համար:

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Ավտոկռունկ	-	1 հատ
Էքսկավատոր	-	1 հատ
Բեռնատար ավտոմեքենա	10 տ-ոց	1 հատ
Ավտոինքնաթափ	3,5 տ-ոց	1 հատ
Բետոնախառնիչ	-	1 հատ
Ավտոբետոնաշաղախատար	-	1 հատ
Եռակցող ագրեգատ	-	2 հատ
Գայլիկոնային մեքենա	-	2 հատ
Ցեմենտաշաղախի արտարկիչ	-	2 հատ
Ներկացրիչ	-	2 հատ